

**ԱՐՑԱԽՅԱՆ ԵՐԿՐՈՐԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԴՐԱ  
ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ**

Համաշխարհային և տարածաշրջանային դերակատարների  
դիրքորոշումների համեմատական քննություն\*

**Բանալի բառեր** – Արցախյան երկրորդ պատերազմ, ԱՄՆ, Ֆրանսիա, Ռուսաստան, Թուրքիա, Իրան, Հնդկաստան, Չինաստան, Միսսիսի խումբ, ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարան, Մոսկվայի պայմանագիր, ցեղասպանություն:

**Մուտք**

Ադրբեջանի կողմից Արցախյան երկրորդ պատերազմի հրահրման պահը ձշտորեն հաշվարկված էր. ԱՄՆ նախագահական ընտրություններ, միջազգային հանրության ուշադրության շեղում «COVID-19» համավարակի վրա, ՌԴ-ի և Թուրքիայի ղեկավարների հակաարևմտյան մտասևեռումների համընկնում և ՀՀ նոր իշխանությունների «սորոսական» ու «հակառուսական» պիտակավորման միջոցով հայ հանրության տոտալ ապակողմնորոշում:

Չնայած որ Միսսիսի խմբի շրջանակներում մոտ երեք տասնամյակ տևած արցախյան բանակցային գործընթացում Ադրբեջանը որոշ հաջողություններ էր արձանագրել, սակայն ի վերջո, օգտվելով աշխարհաքաղաքական բարենպաստ իրավիճակից, նա ռազմական ուժ կիրառեց, և այժմ փաստացի ունենք նոր իրավիճակ: Այժմ ուկրաինական հակամարտության հիման վրա Արևմուտքի և

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 28.08.2022:

Ռուսաստանի միջև հարաբերությունների սրման համատեքստում Բաքվից կարծիքներ են հնչում, որ Մինսկի խումբն այլևս չի կարող արդյունավետ գործել: Ունենալով Մոսկվայի աջակցությունը՝ Բաքուն հայտարարում է, որ Արցախի հարցը լուծված է, իսկ Մինսկի խումբն այլևս անելիք չունի: Սակայն ԱՄՆ-ի և Ֆրանսիայի ակտիվացումը, նրանց հայտարարությունները, որ Ռուսաստանի հետ հարաբերությունների լարումը չի խանգարում այլ տարածաշրջաններում գործող ձևաչափերի պահպանմանը, և Արցախի հարցը լուծված չէ, ստիպում են Ադրբեջանին շարունակել մնալ Մինսկի խմբում: Ուստի նրա ղեկավարության հայտարարությունները, թե իբր Արցախի հարցը լուծված է, զավեշտալի են հնչում, քանի որ հարց է ծագում, թե այդ դեպքում ինչու Ադրբեջանը չի դադարեցնում իր անդամակցությունը այդ ձևաչափին: Ավելին, պատերազմ սանձազերծելով Արցախի և, փաստորեն, նաև Հայաստանի դեմ, Ադրբեջանը կոպտորեն ոտնահարել է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամ երկրների և Մինսկի խմբի համանախագահ երկրներ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կողմից ընդունված ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման մասին մադրիդյան սկզբունքը: Ուստի ակնհայտ է, որ Ադրբեջանը վախենում է կորցնել այն ձեռքբերումները, որոնք Մոսկվայի և Անկարայի հետ գործարքի արդյունք էին, քանի որ մի կողմից Արևմուտքում փոխվել են Հարավային Կովկասի հանդեպ վերաբերմունքը և ցանկությունը՝ զիջելու տարածաշրջանը Ռուսաստանին, մյուս կողմից ուկրաինական պատերազմը հակասություններ է առաջացրել նաև Մոսկվա-Բաքու տանդեմում: Ուստի Բաքուն վաղ թե ուշ փորձելու է օգտվել միջազգային ասպարեզում Մոսկվայի թուլացումից և ձեռնոց նետել ՌԴ-ին Արցախում կամ էլ նրան առաջարկել հերթական գործարքը հայկական շահերի հաշվին: Վերջին շրջանում Բաքվի ագրեսիվ գործողությունները ԼՂ-ում հենց այդ նպատակն են հետապնդում, այն է՝ շոշափել Մոսկվայի կարմիր գծերը: Մյուս կողմից՝ Բաքուն և Անկարան շտապում են ամրագրելու իրենց «հաղթանակը», քանի որ իրավիճակի փոփոխության և տարածաշրջան Արևմուտքի ներթափանցման պայմաններում, օրինակ՝ ՄԱԿ-ի խաղաղապահների տեսքով, Ադրբեջանը ստիպված կլինի վերադառնալ Մինսկի խմբի պայմանավորվածություններին և պատասխանատվություն կրել դրանց

խախտման, ԼՂ-ի հանդեպ ագրեսիայի և տարածաշրջանում Արևմուտքի շահերի ոտնահարման ու ՌԴ-ի հետ գործարքի դիմելու համար:

**Ներկայումս մեր հանրությանը հուզող այս հարցերի շրջագծում փորձենք վերլուծել աշխարհաքաղաքական խոշոր կենտրոնների դերը Արցախյան երկրորդ պատերազմում և ներկայացնել դրանից հետո ստեղծված սկզբունքորեն նոր իրավիճակում ՀՀ-ի առջև ծառայած խնդիրներն ու անելիքները:**

## 1. Ամերիկայի Միացյալ Նահանգներ

ԱՄՆ նախորդ նախագահ Դոնալդ Թրամփը երկրի ներսում վարում էր պրոտեկցիոնիզմի, իսկ արտաքին ասպարեզում՝ հիմնականում իզոլյացիոնիզմի քաղաքականություն՝ շեշտը դնելով ոչ թե քաղաքական, այլ տնտեսական կապերի վրա: 2020 թ. նոյեմբերին ԱՄՆ-ում նախագահական ընտրությունների անցկացման փաստը էապես հեշտացրեց Ադրբեջանի կողմից Արցախի հանդեպ ագրեսիայի իրականացումը: Գործող նախագահ Դոնալդ Թրամփը հայտնի էր Ռուսաստանի հետ աշխարհաքաղաքական ոլորտում առևտուր անելու և ազդեցության գոտիները բաժանելու իր քաղաքականությամբ: ԱՄՆ այդ ժամանակվա վարչակարգը կենտրոնացած էր Չինաստանի դեմ տնտեսական պատերազմների և Իրանի նկատմամբ պատժամիջոցների սահմանման վրա, ինչը, անշուշտ, ձեռնտու էր Ռուսաստանին ու նաև Թուրքիային: Իզուր չէ, որ ԱՄՆ դեմոկրատական կուսակցությունը, նրա մամուլը և փորձագիտական լայն շրջանակները Թրամփին մեղադրում էին Պուտինի դրածոն լինելու<sup>1</sup>, իսկ Ռուսաստանին՝ ԱՄՆ նախագահական ընտրություններին միջամտելու մեջ: Սակայն միևնույն ժամանակ, փորձելով ընտրությունների ընթացքում ստանալ հայ համայնքի աջակցությունը, Թրամփը մի քանի «քաղցր խոսք» ասաց հայերի մասին և արցախյան հակամարտության լուծման համար անգամ օրինակ բերեց Կոսովոն:

---

<sup>1</sup> Տե՛ս **Ryan Lucas**, Senate Releases Final Report On Russia's Interference In 2016 Election, NPR, Washington, 2020, <https://www.npr.org/2020/08/18/903616315/senate-releases-final-report-on-russias-interference-in-2016-election> (մուտք՝ 10.08.2022):

Այնուամենայնիվ, վերջերս գնալով ավելի են հաճախակիանում հրապարակումները, որ ԱՄՆ-ն և Ֆրանսիան ժամանակին առաջարկներ են ներկայացրել ՀՀ կառավարությանը միջազգային կամ սկանդինավյան խաղաղապահների տեղակայման վերաբերյալ, սակայն ՀՀ-ն նախընտրել է ռուս խաղաղապահների տեղակայումը: Այդ ժամանակ դեմոկրատական կուսակցության նախագահի թեկնածու Ջո Բայդենը հայտարարում էր, որ հակամարտության լուծման բանալին երկու կողմերի զինումը դադարեցնելն է, և Ռուսաստանին մեղադրում էր տարածաշրջանում անկայուն իրավիճակ ստեղծելու մեջ: ԱՄՆ փորձագիտական շրջանակների տեսակետը միշտ եղել է այն, որ կովկասյան երեք երկրները միասնական հարթակում պետք է լուծեն իրենց խնդիրները, իսկ Ռուսաստանը տարածաշրջանում իր ազդեցությունը պահպանում է անկայունության օջախներ ստեղծելով:

Նախագահական ընտրություններում հաղթանակ արձանագրած ԱՄՆ նոր վարչակազմը որդեգրեց ԱՄՆ-ին գլոբալ հեգեմոնի դերը վերադարձնելու քաղաքականություն, ինչը վերջին տարիներին դրսևորվում էր նաև Հարավային Կովկասում: Դրանով էին պայմանավորված Մինսկի խմբում ԱՄՆ ակտիվացման փորձերը, հայտարարությունները, որ Արցախի հարցը լուծված չէ, ԱՄՆ դեսպանի այցերը Սյունիք, ՀՀ տարածքային ամբողջականության պաշտպանությունը և հայ-թուրքական հաշտեցման գործընթացը վերսկսելու փորձերում հնարավոր միջնորդի դերի ապահովումը:

Այսօր արդեն ակնհայտ է, որ այն տեսակետը, թե ուկրաինական հակամարտության պայմաններում ԱՄՆ ուշադրությունը դեպի Հարավային Կովկաս կնվազի, չարդարացավ, քանի որ, անկասկած, այդ իրողությունները փոխկապակցված են որպես նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացի բաղկացուցիչ տարրեր: Ռուսաստանը փորձում է հասնել իր համար ազդեցության գոտիների ստեղծմանը և համաշխարհային ուժային կենտրոնների կողմից դրանց ճանաչմանը, իսկ Արևմուտքը, մասնավորապես՝ ԱՄՆ-ն, նշում է, որ անցել է ազդեցության գոտիների ժամանակը: Այդ գործընթացի կարևոր մաս է նաև Հարավային Կովկասը, քանի որ տարածաշրջանի երեք երկրներն էլ նախկինում ԽՍՀՄ մաս են կազմել, իսկ Ռուսաստանն այդ երկրները, բացի բալթյան հանրապետությո-

յուններից, մշտապես դիտարկել է որպես իր ազդեցության գոտի և ոչ թե լիարժեքորեն անկախ պետություններ: Այս համատեքստում պետք է դիտարկել ԱՄՆ ակտիվությունը Մինսկի խմբում և ռուս-թուրքական տանդեմի կողմից Բաքվին արված զիջումները չճանաչելը՝ ինչպես Արցախի կարգավիճակի, այնպես էլ Սյունիքի միջանցքայնացման հարցերում: Այսօր ԱՄՆ-ն արդեն բացահայտ խոսում է արցախյան հակամարտության վերաբերյալ իր առանձին առաջարկների մասին՝ միաժամանակ նշելով, որ Ռուսաստանն է փաստացի տորպեդահարում Մինսկի խմբի գործունեությունը: Թեպետ դեռ հայտնի չէ, թե ինչ առաջարկների մասին է խոսքը, սակայն ակնհայտ է, որ ԱՄՆ-ն ցանկանում է, որ Հայաստանն ու Ադրբեյջանը առանց ՌԴ միջնորդության լուծեն իրենց միջև խնդիրները: Նշվում է, մասնավորապես, տարածաշրջանում հաղորդակցության ուղիների ապաշրջափակման հարցում միջազգային մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը: Սակայն ակնհայտ է, որ Բաքուն ցանկանում է, որ իրականություն դառնա նոյեմբերի 9-ի փաստաթուղթը, որով Սյունիքը փաստացի կօտարվի Հայաստանից ճանապարհների վերահսկողության ՌԴ-ին անցումով: Բաքուն երբեք չի ցանկանա, որ ներդրվեն միջազգային մեխանիզմներ, բացվեն հաղորդակցության ուղիները, քանի որ իր նպատակը ոչ թե դրանց ապաշրջափակումն է, այլ Սյունիքի հանդեպ վերահսկողությունը և հայ-իրանական սահմանի փաստացի վերացումը: Այս համատեքստում պետք է դիտարկել վերջին շրջանի լարվածությունը Արցախում, որի հետևում կանգնած է նաև Մոսկվան: Այսօր Ալիևը, տեսնելով ՌԴ տապալումը Ուկրաինայում և հասկանալով, որ Մոսկվան չի կարողանում կատարել իրեն տրված խոստումները, հրապարակայնորեն մեղադրում է նրան նախկինում ձեռք բերված պայմանավորվածությունները չկատարելու մեջ: Իր հերթին Մոսկվան փորձում է լարվածություն ստեղծել ինչպես հակամարտության գոտում, այնպես էլ ՀՀ ներքաղաքական ասպարեզում և ստիպել Երևանին կատարել նոյեմբերի 9-ի պայմանավորվածությունները: Միևնույն ժամանակ Բաքվի մոտ ջղաձգումներ են առաջացնում ԱՄՆ-ի և Ֆրանսիայի հայտարարությունները արցախյան հակամարտությունը Մինսկի խմբի շրջանակներում կարգավորելու վերաբերյալ, քանի որ Արևմուտքը բացահայտորեն չի ճանաչում նոյեմբերի 9-ի փա-

տաթուղթը և նշում է հայտնի սկզբունքների շրջանակներում հակամարտության համապարփակ կարգավորման անհրաժեշտության մասին: Դրանով է պայմանավորված օգոստոսի 25-ին Ադրբեջանի ԱԳՆ մամլո ծառայության ղեկավարի նյարդային արձագանքը դեպի Ֆիլիպ Ռիկերին Կովկասում բանակցությունների գծով ավագ խորհրդական նշանակելու փաստին, որում Բաքուն կրկին նշում է, որ արցախյան հակամարտությունը լուծված է, և, որքան էլ զավեշտալի է, սպառնում է ԱՄՆ-ին Մինսկի խմբից նրա հեռացմամբ: Հարց է առաջանում՝ ով է որոշել, որ արցախյան հակամարտությունը լուծված է, եթե միջնորդները նման կարծիք չունեն:

Ակնհայտ է, որ քանի դեռ շարունակվում է ԱՄՆ-ՌԴ սուր մրցակցությունը, Երևանին որոշակի անվտանգային երաշխիքներ տալու կամ էլ նրա դիմադրողականությունը մեծացնելու ուղղությամբ Վաշինգտոնի հետագա քայլերը կպարզեն ԱՄՆ իրական նպատակները և կարմիր գծերը Հարավային Կովկասում: Առայժմ ԱՄՆ-ն զերծ է մնում Ադրբեջանին որևէ լուծում հարկադրելուց՝ ցանկանալով լինել անկողմնակալ միջնորդ և դուրս մղել Ռուսաստանին տարածաշրջանից, սակայն Վաշինգտոնը միշտ էլ կարող է փոխել իր դիրքորոշումը՝ ելնելով ստեղծված իրավիճակից և տարածաշրջանում իր շահերի դեմ Բաքվի կամ Երևանի գործողություններից:

## 2. Ֆրանսիա

Ֆրանսիան Մինսկի խմբի համանախագահ երկիր է, և ընդունված է ասել, որ արցախյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացում ներկայացնում է Եվրամիությանը: Արցախյան երկրորդ պատերազմի ժամանակ Ֆրանսիան ակամա որդեգրեց ավելի ակտիվ քաղաքականություն, քան մինչ այդ էր, ինչը պայմանավորված էր երկու գործոնով՝ ԱՄՆ-ում Թրամփի վարչակարգի պլանավորված պասիվությամբ, ինչը մանևրելու հնարավորություններ էր տալիս Փարիզին, և արտաքին ճակատում Ֆրանսիայի նախագահի ավելի ակտիվ քաղաքականությամբ: Էմանուել Մակրոնը, որին շատ հաճախ «մեղադրում են» իրեն Նապոլեոն Բոնապարտի հետ ասոցացնելու մեջ (հիշենք թեկուզ նրա առաջին ճոխ երդմնակալությունը), փորձում է վերականգնել միջազգային աս-

պարեզում Ֆրանսիայի դերը, որը վերջինս կորցրել էր Օլանդի խամրած արտաքին քաղաքականության հետևանքով: 2020 թ. արցախյան պատերազմի օրերին Մակրոնը գրեթե ամեն օր հեռախոսազրույցներ էր ունենում ՀՀ վարչապետի և ՌԴ նախագահ Պուտինի հետ՝ միգուցե փորձելով հասկանալ ՀՀ ռազմավարական դաշնակցին ոչ հարիր կեցվածքը ինչպես ՀՀ սահմանների նկատմամբ ադրբեջանական ունձգությունների, այնպես էլ «Ղարաբաղը Ադրբեջանի մաս է» հայտարարության առնչությամբ: Կարևոր է նշել, որ Մակրոնը առաջինը հրապարակայնորեն հայտնեց պատերազմում Ադրբեջանի կողմից Սիրիայից վարձկան ահաբեկիչների ներգրավման մասին<sup>2</sup> նշելով, որ Պուտինն էլ է տեղյակ դրա մասին, ինչից հետո ստիպված ՌԴ արտաքին հետախուզության ծառայության ղեկավար Նարիշկինը նույնպես դա խոստովանեց, սակայն չնշելով, թե որ կողմն է ներգրավել վարձկաններին: Պատահական չէ, որ այդ օրերին տեղի ունեցավ Էրդողան-Մակրոն հեռակա սուր բանավեճը, որի ընթացքում Մակրոնը քննադատեց Թուրքիային Սիրիայում, Լիբիայում և միջերկրածովյան ավազանում վարած քաղաքականության համար: Իր հերթին Էրդողանը անձնական վիրավորանքներ հասցրեց Ֆրանսիայի նախագահին, ինչին հետևեց առաջադեմ երկրների ղեկավարների քննադատությունը Էրդողանի հասցեին՝ բացի ՌԴ նախագահ Պուտինից, որի «խոսնակ»՝ Չեչնիայի ղեկավար Կադիրովը բացահայտորեն պաշտպանեց Էրդողանին:

Շատ է խոսվում միջազգային խաղաղապահների տեղակայման վերաբերյալ պատերազմի օրերին ՀՀ-ին արված Ֆրանսիայի առաջարկի մասին, սակայն ՀՀ վարչապետի՝ նոյեմբերի 9-ի կապիտուլյացիայի փաստաթուղթը շուտափույթ ստորագրելուց հետո Մակրոնին մնում էր հայտարարել, որ հայ ժողովրդի իրավունքները պետք է հաշվի առնվեն, ինչից հետո՝ նոյեմբերի 26-ին, Ֆրանսիայի Սենատն ընդունեց Արցախի անկախությունը ճանաչելու անհրաժեշտության մասին բանաձևը: Անշուշտ, Ֆրանսիայի այսպիսի հայամետ կեցվածքի ետևում թաքնված էր սեփական պետական շահերի հետապնդումը, որի գլխավոր նպատակը Թուրքիայի դերի հակակշռումն էր միջերկրածովյան ավազանում, Հարավային Կովկասում

2 Sté France Accuses Turkey of Sending Jihadist Fighters To Karabakh, Yerevan, 2020, <https://www.azatutyun.am/a/30868694.html> (մուտք՝ 10.08.2022):

և Մերձավոր Արևելքում: Այդ համատեքստում պետք է դիտարկել Փարիզի ռազմական աջակցությունը Աթենքին, Հունաստանի, Կիպրոսի, Իսրայելի, Հորդանանի և Եգիպտոսի հետ միջերկրածովյան ավազանի գազի պաշարների նկատմամբ թուրքական նկրտումների դեմ համագործակցությունը, Աֆրիկայում նախկին ֆրանսիական գաղութ երկրների հետ հարաբերությունների խորացումը:

ԱՄՆ-ում Բայդենի ընտրվելուց հետո Ֆրանսիան փորձեց նորից ակտիվ դեր ստանձնել նաև ԵԱՀԿ Մինսկի խմբում: Փարիզն իր ներդրումն ունեցավ գերիների վերադարձի հարցում, կազմակերպեց ՀՀ-ի և Ադրբեջանի ղեկավարների հանդիպումը, համակարգեց իր գործունեությունը նաև Եվրոպական խորհրդի ղեկավար Շառլ Միշելի հետ:

Կասկած չկա, որ Փարիզն ու Վաշինգտոնը միասին են գործում արցախյան ճակատում՝ հասկանալով ՌԴ նպատակները՝ դուրս թողնելու իրենց Հարավային Կովկասից և Անկարայի հետ բաժանելու ազդեցության գոտիները: Այդ են վկայում Մինսկի խմբի շրջանակներում խնդիրը լուծելու վերաբերյալ Ֆրանսիայի և ԱՄՆ դիրքորոշումները, որոնք փորձում են ՌԴ-ին հետ բերել այդ ձևաչափ՝ չնայած նրա դիմադրությանը: Ալիևը չնայած հրաժարվում էր Մինսկի խմբի շրջանակներում հանդիպումներից և պատերազմից հետո Բաքվում բացահայտորեն կոպտեց այդ երկու երկրների համանախագահներին՝ հայտարարելով, որ Արցախի հարցը լուծված է, սակայն, տեսնելով ուկրաինական ճակատում ՌԴ թուլացումը և հասկանալով, որ այսօր Փարիզն արդեն միայնակ չի գործում Արցախի հարցում, ինչպես Թրամփի վարչակարգի օրոք էր, ստիպված է հաշվի նստել ֆրանսիական կողմի հետ, ինչի վկայությունն է Ալիևի՝ պատրաստակամորեն Բրյուսել մեկնելը՝ Շառլ Միշելի հետ բանակցելու նպատակով: Այժմ էլ Փարիզը փորձում է ակտիվ միջնորդական դերակատարում ստանձնել նաև ուկրաինական ձգնաժամի հաղթահարման հարցում, ինչը վկայում է, որ առաջիկայում ևս ականատես կլինենք Ֆրանսիայի դերակատարության մեծացմանը միջազգային ասպարեզում:



### 3. Ռուսաստանի Դաշնություն

Վ. Պուտինի 2007 թ. մյունխենյան ելույթից ու մանավանդ արցախյան հակամարտության խաղաղ կարգավորման 2011 թ. կազանյան փորձի ձախողումից հետո Ռուսաստանը վարում էր Թուրքիայի հետ մերձեցման և աշխարհաքաղաքական ազդեցության գոտիների բաժանման քաղաքականություն: Դա հատկապես նկատելի էր Լիբիայում և Սիրիայում, իսկ 2016 թվականից հետո՝ նաև Հարավային Կովկասում: Հաշվի առնելով Էրդոհանի ցանկությունները՝ դառնալու աշխարհաքաղաքական առանցքային խաղացող, ինչպես նաև ԱՄՆ-ին ձեռնոց նետելու մտադրությունը՝ Ռուսաստանը փորձում էր մերձենալ Թուրքիայի հետ՝ ԱՄՆ-ին նյարդայնացնելու, ՆԱՏՕ-ին թուլացնելու<sup>3</sup>, իր դերը միջազգային գործընթացներում բարձրացնելու և Արևմուտքի հետ առևտուր անելու նպատակով: Դրա համար վերջին տարիներին Մոսկվան նույնիսկ տեղի է տալիս Թուրքիայի պանթուրքական նկրտումներին և այդ գաղափարախոսությունը հարմարեցնում էվրասիականության համադրույթի դիտանկյունով մեկնաբանվող ռուսական շահերին: Վաղուց հայտնի է, որ ռուսական գաղտնի ծառայությունների շրջանում կա տեսակետ, որ պետք է ցանկացած գաղափարախոսություն հարմարեցնել ռուսական քաղաքականությանը, ուստի Ռուսաստանն անպատասխան է թողնում, օրինակ, Ալթայի պատկանելության և թյուրքական աշխարհի միավորման վերաբերյալ Թուրքիայի հայտարարությունները: Եվ այդ պատճառով Արցախյան երկրորդ պատերազմից առաջ Թուրքիան իր դաշնակից Ադրբեջանի հետ հասկացավ, որ Ռուսաստանը չի ընդդիմանա թուրք-ադրբեջանական տանդեմին և, ինչպես հարյուր տարի առաջ, կզոհաբերի հայկական տարածքները որպես մանրադրամ: Իր հերթին Ռուսաստանը ցանկանում էր Արցախը «Ադրբեջանի տարածք» դիտարկելու միջոցով Հայաստանի (Գյում-

---

3 Տե՛ս **Benjamin Brimelow**, How NATO's most troublesome member became frenemies with Russia, and why it might not last, "INSIDER", USA, 2022, <https://www.businessinsider.nl/how-natos-most-troublesome-member-became-frenemies-with-russia-and-why-it-might-not-last/> (մուտք 11.08.2022):

րի) և Վրաստանի նախկին ինքնավարությունների (Աբխազիա, Հարավային Օսիա) նման այնտեղ ևս ունենալ ռազմաբազա՝ հետագայում ՆԱՏՕ-ին անդամակցելու ցանկության դեպքում Ադրբեջանին զսպելու համար: Արցախյան հիմնահարցը միշտ էլ Ռուսաստանի համար եղել է լծակ՝ Հայաստանի և Ադրբեջանի քաղաքական կյանքի ու աշխարհաքաղաքական կողմնորոշումների վրա ազդելու համար: Մեծ հաշվով՝ Ռուսաստանին այդքան էլ չի հետաքրքրում, թե տվյալ պահին ում տարածքն է համարվում Արցախը, որովհետև քանի դեռ այն պաշտոնապես ճանաչված չէ և սակարկությունների առարկա է, միշտ էլ կարելի է փոխել «Ժամանակավոր սեփականատերերին»:

Արցախյան երկրորդ պատերազմից հետո Ռուսաստանը սկզբում հայտարարում էր, որ Արցախի հարցը լուծված է, և մնում է կարգավորել միայն հումանիտար հարցերը: Սակայն Բայդենի՝ իշխանության գալուց հետո, տեսնելով Արևմուտքի դիմադրությունը Արցախում ռուս-թուրքական տանդեմի ինքնագործունեությանը, Ռուսաստանը հասկացավ, որ կարող է ենթարկվել միջազգային պատժամիջոցների և Հայաստանում ավելի մեծացնել հակառուսական տրամադրությունները՝ հայ ժողովրդի աչքում կորցնելով ավանդական դաշնակցի կերպարը: Ուստի Մոսկվան երբեմն նորից խոսում է Մինսկի խմբի ձևաչափում հարցը լուծելու և Արցախ համանախագահների այց կազմակերպելու մասին, իսկ երբեմն էլ Արևմուտքին է մեղադրում այդ ձևաչափը տապալելու մեջ: Բոլոր դեպքերում ո՛չ Ռուսաստանը և ո՛չ էլ Ադրբեջանը Մինսկի խմբի ձևաչափից հրաժարվելու հարցով պաշտոնապես չեն դիմել ՄԱԿ-ին ու ԵԱՀԿ-ին:

Թվում էր, թե Ռուսաստանը Թուրքիայի հետ ստեղծելու է «3+3» հարթակը՝ տարածաշրջանային հարցերը և մասնավորապես Արցախի հարցը Մինսկի խմբից այդտեղ տեղափոխելու համար: Սակայն այստեղ էլ Վրաստանը խառնեց Ռուսաստանի պլանները՝ հրաժարվելով մասնակցել այդ ձևաչափին, իսկ տարածաշրջանային մի երկրի բացակայությունն արդեն ապալեգիտիմացնում է այդ գործընթացը: Պարզ է, որ Վրաստանը դա արեց ԱՄՆ «խորհրդով» նրա պաշտպանության նախարարի՝ Վրաստան այցից հետո, չնայած որ սկզբում հայտարարել էր իր հնարավոր մասնակցության մասին:

Հայ հանրության շրջանում կա տեսակետ, որ Ադրբեջանը, խախտելով հրադադարը և կրակ բացելով Արցախի ուղղությամբ, վնաս է հասցնում ռուս խաղաղապահների գործունեությանը: Սակայն դա միայն քարոզչական նպատակներով ստեղծվող պատրանք է: Այսօր Ադրբեջանը հասկանում է, որ ռուս խաղաղապահների ներկայությունը Արցախն Ադրբեջանի կազմում պահելու գրավականն է, քանի որ Ռուսաստանը պաշտոնապես հայտարարում է Արցախի՝ Ադրբեջանի մաս լինելու մասին, իսկ միջազգային խաղաղապահների տեղակայման պայմաններում Ադրբեջանն այլևս չի կարողանա Ռուսաստան-Թուրքիա-Ադրբեջան եռակողմ ձևաչափով լուծել արցախյան խնդիրը: Բացի այդ՝ որևէ այլ միջազգային առաքելություն չի հանդուրժի և լուռ չի հետևի Ադրբեջանի սադրանքներին: Իսկ զինադադարը պարբերաբար խախտելով՝ Ադրբեջանը լուծում է երկու կարևոր խնդիր՝ ցույց տալ Արցախի ժողովրդին, որ այդտեղ ապրելը անվտանգ չէ նույնիսկ խաղաղապահների ներկայության պայմաններում, և իրականացնել Արցախի հայաթափումը, անընդհատ լարվածության մեջ պահել Հայաստանին և ցույց տալ, որ, առանց խաղաղապահների, Ադրբեջանը լայնածավալ պատերազմ կսկսի Արցախի դեմ ու չի սահմանափակվի տեղային կրակահերթերով:

Նման պայմաններում ձախողվելով նաև Ուկրաինայում՝ ՌԴ-ն ստիպված է է՛լ ավելի բավարարել Ալիևի ախորժակը՝ իր հատուկե՛նտ դաշնակիցներից մեկին չկորցնելու և նրան իր ազդեցության ոլորտում պահելու նպատակով: Դրա վերջին վկայությունն էին ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղարի հայտարարությունները Արցախից ՀՀ զինված ուժերի դուրսբերման վերաբերյալ, ինչն ակնհայտ հրահանգ էր Մոսկվայից: Անկասկած, քանի դեռ Ռուսաստանի ղեկավարությունը շարունակում է Ուկրաինայում ԱՄՆ-ի ու նրա դաշնակիցների հետ անհաշտ հակամարտությունը, նա ամեն անգամ կգոհաբերի հայկական շահերը՝ Թուրքիայի ղեկավարի հետ բաժանելով ազդեցության գոտիները, որպեսզի ժամանակ շահի, որը սկսել է աշխատել իր դեմ:

#### 4. Իրանի Իսլամական Հանրապետություն

44-օրյա պատերազմի սկզբում Իրանը հանդես բերեց պասիվ դիրքորոշում՝ բավարարվելով դիտորդի դերով, երբեմն էլ շնորհավորելով Ադրբեջանին «գրավյալ տարածքներն ազատագրելու» կապակցությամբ: Սակայն շատ շուտով Իրանը հասկացավ, որ պատերազմի թիրախներից մեկն էլ հենց ինքն էր. Իսրայելը գենքի տեսքով մեծ աջակցություն էր ցուցաբերում Ադրբեջանին, և, բացի այդ, իսրայելական ուղղաթիռները և անօդաչուները հետախուզական տեղեկատվություն էին հավաքում Իրանի սահմանների մոտ: Գիտակցելով դա՝ Իրանը սկսեց բացահայտորեն մեղադրել Ադրբեջանին սիոնիստական ուժերի հետ համագործակցելու մեջ<sup>4</sup>, ինչից հետո Ադրբեջանի սահմանի մոտ իրականացվեցին լայնածավալ զորավարժություններ: Բացի այդ՝ Իրանը հասկանում է, որ, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքով» Ադրբեջանին Նախիջևանով դեպի Թուրքիա ճանապարհի տալը առաջին հերթին օղակելու է հենց իրեն, ուստի տրամաբանական էին իրանական գեներալների այցը Մեդրի և ՀՀ տարածքային ամբողջականության պաշտպանության ու Իրանի կարմիր գծերի վերաբերյալ հայտարարությունները: Սակայն միևնույն ժամանակ Իրանը գիտակցում էր իր՝ միջազգային մեկուսացման մեջ լինելը և սկզբում փորձում էր հարմարվել իրավիճակին ու որոշակի օգուտներ քաղել: Այդ պատճառով, թեկուզ դժկամությամբ, բայց համաձայնեց մասնակցել Հարավային Կովկասի շուրջ Թուրքիայի առաջարկած «3+3» ձևաչափին: Մյուս կողմից՝ Արևմուտքի հետ միջուկային ծրագրի շուրջ բանակցությունների վերսկսումը հույս են ներշնչում պաշտոնական Թեհրանին, որ ինքը միայնակ չի մնա ռուս-թուրքական առևտրում, ինչպես եղավ Սիրիայի դեպքում, երբ Իրանը փաստացի դուրս մղվեց սիրիական գործընթացներից:

Ուկրաինայում պատերազմի սկսվելուց հետո Արևմուտքը՝ ԱՄՆ-ի գլխավորությամբ, գիտակցեց, որ Ռուսաստանից Եվրոպայի էներգետիկ կախվածությունը չեզոքացնելու համար կարևոր է Իրա-

<sup>4</sup> Տե՛ս Eldar Mamedov, Perspectives | Tensions between Iran and Azerbaijan back on the agenda, “Eurasianet”, Azerbaijan, 6 May, 2022, <https://eurasianet.org/perspectives-tensions-between-iran-and-azerbaijan-back-on-the-agenda> (մուտք 11.08.2022):

նի հետ հարաբերությունների կարգավորումը: Պատահական չէ, որ այժմ Ռուսաստանն ամեն կերպ, նույնիսկ վետոյի կիրառմամբ, խոչընդոտում է Իրանի հետ միջուկային հարցերի շուրջ գործարքի կնքումը, ինչի առնչությամբ դժգոհություններ են հնչում Թեհրանից, որը նշում է, որ Մոսկվային երբեք էլ ձեռնադրել չի եղել Իրան-Արևմուտք հարաբերությունների կարգավորումը: Նման հեռանկարը ակնհայտորեն դուր չի գալիս նաև Թուրքիային և Իսրայելին, որոնք մինչ օրս համարվել են տարածաշրջանում ԱՄՆ գլխավոր դաշնակիցները և չեն ցանկանում կորցնել իրենց առանձնաշնորհյալ դերը Վաշինգտոնի աչքում:

Չպետք է մոռանալ մինչև իսլամական հեղափոխությունը ԱՄՆ-Իրան դաշնակցային հարաբերությունների և այդ շրջանում ԱՄՆ արտաքին քաղաքականության մեջ Թուրքիայի աշխարհաքաղաքական համեստ դերի մասին: Թեհրանի համար շատ կարևոր է նաև Վրաստանի ու Հայաստանի տարածքներով «Հյուսիս-հարավ» ճանապարհի գործարկումը, ինչը ելք կապահովի Հնդկաստանից Իրանի տարածքով դեպի Սև ծով:

Արցախյան երկրորդ պատերազմը բացասական հետևանքներ ունեցավ Իրանի արտաքին առևտրի համար. Ադրբեյջանը Գորիս-Կապան ճանապարհահատվածում սկսեց իրանցի վարորդներից գումար գանձել<sup>5</sup>, ինչին ի պատասխան՝ Իրանը հայտարարեց նոր՝ Տաթև-Աղավնո ճանապարհի կառուցման մասին: Ինչ վերաբերում է Հայաստանի սահմանների փոփոխությանը և «Զանգեզուրի միջանցքին», ապա Թեհրանը հասկանում է, որ այդ ճանապարհով Թուրքիան ուժեղացնում է իր պանթյուրքական նկրտումները՝ հաշվի առնելով մանավանդ Իրանի հյուսիս-արևմուտքում թրքախոսների ներկայությունը, ինչն անմիջական վտանգ է ստեղծում նրա տարածքային ամբողջականության համար:

2022 թ. հուլիսի 19-ին Թեհրանում տեղի ունեցած եռակողմ հանդիպման ժամանակ Իրանի հոգևոր առաջնորդը թեև ողջունեց «տարածքների վերադարձը» Ադրբեյջանին, սակայն նշեց, որ Իրանը չի հանդուրժի ՀՀ-ի հետ սահմանի փակումը: Փաստացի իրանական

<sup>5</sup> Տե՛ս **Vali Kaleji**, *Iran perceptions and concerns of border tensions between Armenia and the Republic of Azerbaijan*, “Valdai Discussion Club”, Moscow, 2022, <https://valdaiclub.com/a/highlights/iran-s-perceptions-and-concerns-of-border-tensions/> (մուտք՝ 12.08.2022):

կողմն ազդարարեց իր երկու գործընկերներին, որ ռուս-թուրքական տանդեմի նպատակը Իրանի շրջափակումն է ՀՀ-ի հետ իր սահմանի վերահսկողության միջոցով: Արևմուտքի հետ հարաբերությունների հնարավոր կարգավորման դեպքում անխուսափելի է դառնում այս հարցում Իրանի դիրքորոշման հետագա կոշտացումը, ինչը նշանակում է, որ Թեհրանն այլևս թույլ չի տա ռուս-թուրքական տանդեմի կողմից իր շահերի ոտնահարումը: ՌԴ-ն և Թուրքիան կփորձեն Թեհրանին համոզել իրենց հետ գործել ընդդեմ Իսրայելի և ԱՄՆ-ի: Դա կուղեկցվի նաև Իրանի հնարավոր ժողովրդավարացման պարագայում հոգևոր դասի կողմից ազդեցության կորստի վերաբերյալ զգուշացումներով: Բայց, վերջին հաշվով, ամեն ինչ կախված կլինի Իրանի որոշումից՝ կրկին ընտրել մեկուսացումը, թե՞ կարգավորել հարաբերությունները ԱՄՆ-ի հետ և, ինչպես նախկինում, դառնալ նրա հենարանն ու այլընտրանքը Թուրքիային:

## 5. Թուրքիա

1990-ական թթ. գտնվելով Արևմուտքի «վերահսկողության» ներքո՝ Թուրքիան զերծ է մնացել արցախյան հակամարտությանն ուղղակի մասնակցությունից և սահմանափակվել միայն կամավորականներ ուղարկելով ու ադրբեջանական պատերազմի ժամանակ Թուրքիան Ադրբեջանին օժանդակում էր ուղղակիորեն՝ ոչ միայն ՆԱՏՕ-ի զենքերով, այլև սեփական մարդուժով<sup>6</sup> ու ահաբեկիչներով, անմիջականորեն ղեկավարում էր նրա ռազմական գործողությունները, օգնում Բաքվին միջազգային ասպարեզում՝ հայտարարելով, որ պետք է ուժով վերադարձնել Ադրբեջանի «օկուպացված տարածքները»: Պարզ է նաև, որ, առանց Անկարայի դրդման, Ադրբեջանը պատերազմ չէր սկսի Արցախի դեմ: Այդ քայլերով Թուրքիան մեծացրեց իր կշիռը ավանդաբար ՌԴ ազդեցության գոտին համարվող Հարավային Կովկասում, հաջողության հասավ Ադդամում ռուս-թուրքական դիտոր-

<sup>6</sup> Տե՛ս Демоян Г., Турция и Карабахский конфликт в конце XX – начале XXI веков. Историко-сравнительный анализ, Ер., 2006, էջ 107:

դական կենտրոն ստեղծելու գործում, ինչով առաջին անգամ պաշտոնապես ամրագրեց իր մուտքը Հարավային Կովկաս: Իսկ մեկ տարի անց Շուշիի հռչակագրի ստորագրումով էլ ավելի մեծացրեց իր ազդեցությունը Ադրբեջանում, բացահայտեց իր պանթյուրքական նկրտումները, խոցելի դարձրեց Իրանի սահմանը, այդ թվում՝ Իսրայելի հետ համագործակցելով:

Արցախյան երկրորդ պատերազմից հետո Թուրքիան շինծու պատրաստակամություն հայտնեց կարգավորելու հարաբերությունները Հայաստանի հետ՝ հասկանալով մեր երկրի ռազմական, աշխարհաքաղաքական և տնտեսական թուլությունը: Պաշտոնական Մոսկվային նույնպես ձեռնտու է այդ հարաբերությունների «կարգավորումը», մանավանդ որ պատերազմից հետո Հայաստանը անվտանգային առումով ավելի մեծ կախվածության մեջ է հայտնվել Ռուսաստանից, ուստի ստիպված է արտաքին քաղաքական ամեն մի քայլ համաձայնեցնել Մոսկվայի հետ:

Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման համատեքստում Թուրքիան ցանկանում է, որ Հայաստանի Հանրապետությունը վավերացնի 1921 թ. Կարսի պայմանագիրը, որով վերջ կդրվի ՀՀ-ի՝ Թուրքիային ուղղված տարածքային պահանջներին: Այդ նպատակով, հաշվի առնելով պատերազմից հետո ՀՀ ծանր վիճակը, Անկարան նախաձեռնեց հայ-թուրքական նոր բանակցային գործընթաց՝ նպատակ ունենալով ստանալու առավելագույնը և այդ ձանապարհին չեզոքացնելու նաև Սփյուռքին ու Հայկական հարցի պահանջատիրությունը: Մոսկվան նույնպես կողմ է վերոնշյալ գործընթացին, քանի որ աշխարհաքաղաքական այս բարդ պայմաններում ցանկանում է Թուրքիայի հետ ազդեցության գոտիների բաժանել տարածաշրջանը և չեզոքացնել Արևմուտքի ազդեցությունը: Բացի այդ՝ չպետք է մոռանալ, որ Կարսի պայմանագիրը պատճենվել է 1921 թ. Մոսկվայի ռուս-թուրքական ոչ լեգիտիմ պայմանագրից, ուստի երկու կողմերն էլ շտապում են անկախ Հայաստանի հետ պաշտոնապես ամրագրելու դրանց արդյունքը դարձած սահմանները:

ԱՄՆ-ն նույնպես ցանկություն ունի իր մասնակցությունն ապահովելու հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացում: Ավելորդ չէ նշել, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը նախագահ Բայդենի կողմից 2021 թ. ապրիլին Թուրքիայի վրա

սեփական լծակներն ամրապնդելու և նրան իր ազդեցության գոտի վերադարձնելու նպատակ էր հետապնդում: Մամուլում լուրեր էին շրջանառվում, որ նախագահ Բայդենը Թուրքիայի դեկավարին կոչ է արել վերջ դնելու Հայաստանի շրջափակմանը և նրան ելք տալու դեպի ծով: Ուշագրավ էր նաև հայկական պատվիրակության այցը Վաշինգտոն, որտեղ նրան ընդունեց ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության հարցերով խորհրդական Զ. Սալլիվանը և պատրաստակամություն հայտնեց օժանդակելու հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը:

Ակնհայտ է, որ Թուրքիայի համար Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման խնդիրը ոչ միայն հին հաշիվները փակելու, այլև ՌԴ-ի և ԱՄՆ-ի հետ շարունակվող քաղաքական առևտրում նոր բնագծեր սվաճելու միջոց է: Վերջին տարիներին Էրդողանը փորձում է երկրում մեծացող տնտեսական խնդիրները փոխհատուցել արտաքին ոլորտում Թուրքիայի դերի բարձրացմամբ և ազգայնական գաղափարների տարածմամբ: Այդ են վկայում Սիրիայում, Լիբիայում և Կովկասում Թուրքիայի ռազմական գործողություններն ու նաև ակտիվացումը միջերկրածովյան ավազանում: Բացի այդ՝ Էրդողանը ցանկանում է իրեն վերագրել խաղաղարարի դեր և բարձրացնել իր հեղինակությունը միջազգային ասպարեզում: Դրան են ուղղված հայ-թուրքական հաշտեցման նմանակումային քայլերը, ինչպես նաև ուկրաինական հացահատիկից կախված երկրներում սովի դեմ պայքարի կեղծ մարդասիրական ցուցանակի տակ ՌԴ-ի և Ուկրաինայի հետ ձեռք բերված համաձայնությունը: Սակայն միջազգային ասպարեզում նույնպես Էրդողանն անհաջողությունների է մատնվում, քանզի նա ձախողեց ռուս-ուկրաինական հակամարտությունում անկախ միջնորդի դերը: Այսօր Էրդողանը փաստացի պաշտպանում է Պուտինին՝ մեղադրելով Արևմուտքին նրա հանդեպ անարդարացի լինելու համար, չի միանում ՌԴ-ի դեմ սանկցիաներին, իսկ վերջերս էլ Ուկրաինան Թուրքիային մեղադրեց Ռուսաստանի հետ միասին իր հացահատիկը գողանալու մեջ: Այնուհետև Էրդողանը հայտարարեց Սիրիայում քրդերի դեմ ռազմական գործողության մեկնարկի մասին, սակայն ԱՄՆ արձագանքից հետո առայժմ սահմանափակվում է միայն դրա նախապատրաստման քայլերով: ՆԱՏՕ-ին Ֆինլանդիայի և Շվեդիայի ան-



դամակցությանը հավանություն տալու դիմաց էլ Էրդողանը ոչինչ չստացավ, քանի որ այդ երկրների սահմանադրական դատարանները մերժեցին իրենց քաղաքացի հանդիսացող քրդերի արտահանձնումը Թուրքիային, իսկ այնուհետև ԱՄՆ օրենսդիրները մերժեցին հանել դրա դիմաց Անկարային արդիականացված «F-16» կործանիչների վաճառքի արգելքը:

Այսօր արդեն ակնհայտ է, որ Թուրքիայում սպասվող նախագահական ընտրությունները Էրդողանի համար լինելու են անսախաղեպ ծանր՝ հսկայական ինֆլյացիայի, մարդու իրավունքների ոտնահարումների և Արևմուտքի հետ հարաբերությունների լարման պայմաններում: Ունենալով ուժեղ ընդդիմություն, որին միացել են նախկին ազդեցիկ նախարարներ Ա. Դավիթթօղլուն և Ա. Բաբաջանը, Էրդողանը կառերեսվի լուրջ խնդիրների: Ինչ վերաբերում է իր «փոքր եղբորը» տված խոստումներին, ապա նոր իրողությունների պայմաններում Էրդողանը փորձում է բավարարել «Զանգեզուրի միջանցքի» վերաբերյալ նրա նկրտումները, ինչպես նաև հասնել Ադրբեջանի կողմից ԼՂ-ի դեմ ագրեսիայի արդյունքների միջազգային ձանաչմանը, իսկ Հայաստանի հետ հարաբերություններում միայն արտաքուստ է փոխում իր թշնամական հոետորաբանությունը:

## 6. Զինաստանի Ժողովրդական Հանրապետություն

Պատմականորեն Զինաստանը Հայաստանի նկատմամբ բարեկամաբար տրամադրված երկիր է համարվել<sup>7</sup>: Վերջին տարիներին Պեկինը Ասիական զարգացման բանկի միջոցով գումար է տրամադրել ՀՀ-ին՝ «Հյուսիս-հարավ» ճանապարհի կառուցման համար, բացել դպրոցներ, ներդրումներ արել ենթակառուցվածքների ոլորտում:

Ժամանակին մեզանում կար նաև այն համոզմունքը, որ Զինաստանին ձեռնառու չէ Թուրքիայի հզորացումը ուղղորակյալ հարցի հարուցած խնդիրների պատճառով, քանզի ուղղուրները, լինելով

<sup>7</sup> Տե՛ս **Abrahamyan P.**, Was China All Innocent During the 2020 Artsakh War? “EVN Report”, Yerevan, 2021, <https://evnreport.com/opinion/was-china-all-innocent-during-the-2020-artsakh-war/> (մուտք՝ 14.08.2022):

էթնիկ թյուրքեր, ունեն անջատողական տրամադրություններ, ինչից օգտվում է Թուրքիան: Սակայն վերջին տարիներին Պեկինը կարողացել է բարեհաջող չեզոքացնել Անկարայի նկրտումները՝ նրան ներգրավելով տարբեր ծրագրերում՝ համոզված լինելով, որ ավելի լավ է մրցակցին մոտ և կանխատեսելի պահել: Իր հերթին Թուրքիան նույնպես վերջին տարիներին առավել պասիվ է ուղղութեան հարցում և հանդես է գալիս Չինաստանի տարածքային ամբողջականության պաշտպանության օգտին: Թուրքիան ներգրավված է չինական «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» ծրագրում, Չինաստանի տնտեսական առանցքային գործընկերներից մեկն է, չինական ընկերությունները միլիոնավոր դոլարների ներդրումներ են անում Թուրքիայի ենթակառուցվածքների և տնտեսության մեջ: Դրանով Չինաստանը նաև նվազեցնում է Թուրքիայի կյանքում Արևմուտքի դերը՝ տնտեսական ձգնաժամերի և սանկցիաների պայմաններում տրամադրելով ֆինանսական աջակցություն: Բնական է, որ Թուրքիան չինական ծրագրերում իր հետ ներգրավում է նաև Ադրբեյջանին, որի տնտեսության մեջ նույնպես Պեկինը միլիոնավոր դոլարների ներդրումներ է անում:

Չինաստանը «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» ծրագիրը դիտարկում է որպես ԱՄՆ-ին տնտեսապես հակակշռելու, իր ազդեցությունը Եվրոպայում, Կովկասում, Աֆրիկայում և Միջին Ասիայում տարածելու միջոց: Բացի այդ, ծրագրի մասնակից երկրներին ենթակառուցվածքների կառուցման համար տրամադրելով մեծածավալ ֆինանսական միջոցներ, Չինաստանը նրանց քաղաքական կախվածության մեջ է գցում, քանի որ այդ երկրները հաճախ վճարում են, օրինակ, իրենց հանքերի նկատմամբ Չինաստանի վերահսկողության սահմանմամբ: Սկզբնապես «Մեկ գոտի, մեկ ճանապարհ»-ը անցնում էր Վրաստանի տարածքով, սակայն 2008 թ. օգոստոսյան պատերազմից հետո Չինաստանը հասկացավ, որ ավելի ապահով կլինի այդ ճանապարհին անցկացնել Թուրքմենստան-Իրան-Թուրքիա գծով: Ռուսաստանը նույնպես փորձում է ներգրավվել այդ գործընթացում «Զանգեզուրի միջանցքը» բացելու և վերահսկելու միջոցով, ինչին Չինաստանն առաջժ չի մասնակցում, բայց դեմ չի լինի՝ հաշվի առնելով Ռուսաստանի հարաբերությունների լարումը Արևմուտքի հետ: «Զանգեզուրի միջանցքի» մասին խոսակցություն-

ները, որոնք ակտիվացան Արցախյան երկրորդ պատերազմից հետո, հասկանալի են դարձնում ՄԱԿ-ում ՀՀ շահերի դեմ Ռուսաստանի միջնորդությամբ Չինաստանի քվեարկության դրդապատճառները<sup>8</sup>:

Սրա միակ իրական հակակշիռը Հնդկաստանի «Հյուսիս-հարավ» նախաձեռնությունն է, որով Արևմուտքը փորձում է զսպել Չինաստանին: ԱՄՆ դեսպանի այցը Սյունիք, ՀՀ տարածքային ամբողջականության պաշտպանությունը, Մինսկի խմբում ամերիկացի և ֆրանսիացի համանախագահների ակտիվացումը, հայտարարությունները, որ Արցախի հարցը լուծված չէ, Եվրոպայի՝ Հայաստանին «Հյուսիս-հարավ» նախագծի համար միջոցներ տրամադրելու մտադրությունը վկայում են, որ Արևմուտքը շահագրգռված է ՀՀ տարածքային ամբողջականության պահպանմամբ և այդ նախագծում Հայաստանի լայն ներգրավմամբ: Մյուս կողմից՝ Իրանը նույնպես հայտարարել է ՀՀ սահմանների փոփոխության անթույլատրելիության մասին՝ հասկանալով, որ «Զանգեզուրի միջանցքով» Թուրքիան, Ադրբեջանն ու նաև Իսրայելը փորձում են շրջափակել իրեն: Հնդկաստանն էլ գերադասում է, որ ձանապարհն անցնի Իրանով և Հայաստանով, այլ ոչ թե Պակիստանի դաշնակից Ադրբեջանով: Հայաստանի օգտին են նաև ԱՄՆ-Իրան միջուկային բանակցություններում առաջընթացը, քանի որ ԱՄՆ-ն կարող է չեղարկել Իրանի նկատմամբ պատժամիջոցները և փորձել տարածաշրջանում Թուրքիային հակակշռել Իրանի դերի բարձրացմամբ:

Սկզբնապես Չինաստանը ոգևորված էր ՌԴ ներխուժմամբ Ուկրաինա՝ Թայվանի հարցի նմանատիպ լուծման և Արևմուտք-Ռուսաստան հակամարտության մեջ շահաբաժիններ ձեռք բերելու նպատակով: Սակայն ԱՄՆ-ի կողմից Թայվանին ռազմական աջակցության տրամադրումից և Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի խոսնակ Փելոսիի՝ Թայվան այցից հետո Չինաստանը զգուշանում է ԱՄՆ-ի հետ ուղղակի բախումից, ինչպես նաև տնտեսության ոլորտում հակամարտությունից: Ի վերջո ԱՄՆ-ի հետ տնտեսական հարաբերություններից է կախված Չինաստանի տնտեսության 80 %-ը, որն այսօր

<sup>8</sup> Տե՛ս Nima Khorrami, Perspectives | How China gains from Armenia-Azerbaijan war, “Eurasianet”, USA, 2020, <https://eurasianet.org/perspectives-how-china-gains-from-armenia-azerbaijan-war> (մուտք՝ 14.08.2022):

գրանցում է պատմականորեն ամենադանդաղ աճը: Լավ իմանալով Չինաստանի գուսպ և զգուշավոր արտաքին քաղաքականությունը՝ պետք է ենթադրել, որ, տեսնելով Ուկրաինայում Ռուսաստանի ձախողումը, ՌԴ-ի հանդեպ տնտեսական պատժամիջոցների կիրառումը, իսկ ապագայում՝ նաև ռուս-թուրքական տանդեմի տապալումը, Չինաստանը կփորձի այլընտրանքային ուղիներ փնտրել իր «Մեկ գոտի, մեկ ձանապարհ» ծրագրի իրականացման համար՝ փոխելով իր ներկայիս զգուշավոր դրական վերաբերմունքը «Ջանգեզուրի միջանցքի» հանդեպ:

## 7. Հնդկաստան

Ասիայում ներկայումս Չինաստանի նկրտումներին հակադրվում է Հնդկաստանը<sup>9</sup>, որը փորձում է «Հյուսիս-հարավ» նախագծի մեջ ներգրավել այն երկրներին, որոնք ցանկանում են հակակշռել Չինաստանի դերի բարձրացմանը Կենտրոնական Ասիայում և միջագային ասպարեզում ընդհանրապես: «Հյուսիս-հարավ» նախագծի նպատակն է շրջանցել թշնամական Պակիստանը, միանալ Իրանին ու Ռուսաստանին և առևտրային ուղիներ ստեղծել դեպի Եվրոպա: Այդ ծրագրերի իրականացման համար Իրանում Հնդկաստանի դեսպանը 2021 թ. մարտի 10-ին հայտարարեց<sup>10</sup>, որ Հնդկաստանը պլանավորում է «Չարբոհար» նավահանգիստը և Հնդկական օվկիանոսը միացնել Եվրոպայի և Հելսինկիի հետ՝ Հայաստանի տարածքով ստեղծելով հյուսիս-հարավ միջագային տրանսպորտային հանգույցը: Երևանում այս հայտարարությունները մեծ ոգևորություն առաջացրին, սակայն մինչ օրս Հայաստանի կառավարությունը որևէ հստակ ռազմավարություն չի մշակել այդ գործընթացում ներգրավվելու և դրա իրականացման համար ներդրումներ ապահովելու համար: Հնդկաստանին հաջողվել է նաև համոզել ԱՄՆ-ին սանկցիաներ չկիրառել «Չարբոհարում» հնդկական ներդրումների նկատմամբ՝ հաշվի առնելով Իրանի հանգամանքը: Ուստիև Իրանը

<sup>9</sup> **Stu Davide Cancarini**, China, India and the Crossroads of 21st Century Infrastructure Competition, Istituto Affari Internazionali, Roma, 2019, էջ 1:

<sup>10</sup> **Stu Yeghia Tashjian**, Armenia and India's Vision of "North-South Corridor": A Strategy or a "Pipe Dream"?, "The Armenian Weekly", USA, 2021, <https://armenianweekly.com/2021/03/24/armenia-and-indias-vision-of-north-south-corridor-a-strategy-or-a-pipe-dream/> (մուտք՝ 15.08.2022):

փորձում է շահաբաժիններ քաղել երկու աշխարհաքաղաքական կենտրոնների հետ համաժամանակյա համագործակցությունից<sup>11</sup>:

Հայաստանի շահերի տեսանկյունից այս ծրագիրը չափազանց արժեքավոր է՝ հաշվի առնելով այն բարդ աշխարհաքաղաքական իրավիճակը, որում հայտնվել է մեր երկիրը պատերազմից հետո: Սակայն ծրագրի լիարժեք մասնակիցը դառնալու համար անհրաժեշտ են մեծածավալ ներդրումներ՝ տրանսպորտային ենթակառուցվածքների արդիականացման համար: Հայաստանի հարավային երկաթուղին կարող է դառնալ տրանզիտային միջանցք Եվրոպայի և Պարսից ծոցի համար ու Հայաստանը միացնել ոչ միայն ԵԱՏՄ երկրների, այլև Հնդկաստանի, Չինաստանի և Իրանի հետ: Սակայն Իրանը չի շտապում ներդրում անելու երկաթուղու հայկական հատվածի կառուցման համար. այստեղ իր դերն ունի այն, որ հայկական երկաթուղին պատկանում է ռուսական հարավկովկասյան երկաթուղիներին, և դրա կառավարման լծակներն ամբողջովին Մոսկվայի ձեռքում են: Ի տարբերություն Հայաստանի՝ Ադրբեջանն ամեն ինչ անում է ճանապարհային միջանցքն իր տարածքով անցկացնելու, Հայաստանը տնտեսապես և քաղաքականապես մեկուսացնելու և իր դիրքերը միջազգային ասպարեզում ամրապնդելու համար, ինչից ելնելով հսկայական ներդրումներ է անում՝ արդիականացնելու իր ենթակառուցվածքները: Սակայն ամեն ինչ դեռևս կորած չէ Հայաստանի համար: Աշխարհաքաղաքական նոր զարգացումները փոխում են Ադրբեջանի դերն այս նախագծում: Պակիստան-Ադրբեջան-Թուրքիա միությունը ստիպում է Հնդկաստանին վերստին կարևորել Հայաստանի դերն այս նախագծում՝ հաշվի առնելով նաև վերջինիս՝ ԵԱՏՄ անդամ և Իրանի հարևան լինելը: Կարևոր է նաև Ադրբեջանի դիրքորոշումը Քաշմիրի հարցում. գաղտնիք չէ, որ այս հակամարտությունում Բաքուն լիովին աջակցում է Պակիստանին: Ուստի Հայաստանը պետք է ամեն ինչ անի Եվրոպայից, Իրանից և Հնդկաստանից ներդրումներ ապահովելու համար՝ այդպիսով վերջ դնելով տնտեսական շրջափակմանն ու բարձրացնելով իր դերը մի-

---

<sup>11</sup> Տե՛ս **Kiran Sharma** and **Akihiro Sano**, India and China jostle for influence in Iran and Central Asia, “Nikkei Asia”, Japan, 2018, <https://asia.nikkei.com/Spotlight/Asia-Insight/India-and-China-jostle-for-influence-in-Iran-and-Central-Asia> (մուտք 15.08.2022):

ջազգային ասպարեզում: Բայց ամենակարևորն այն է, որ այս ծրագիրն անհրաժեշտ է ազգային անվտանգության համար, քանի որ, դառնալով տրանսպորտային միջանցք, Հայաստանը կապահովի խաղաղությունն իր տարածքում, ինչում շահագրգռված կլինեն նաև տարածաշրջանային և միջազգային խաղացողները:

2021 թ. Հնդկաստանի կառավարությունը հայտարարեց, որ մտադիր է աջակցել Հայաստանին իր տարածքային ամբողջականությունը պաշտպանելու հարցում: Այնուհետև Հնդկաստանի ԱԳ նախարարն իր` Հայաստան այցի ժամանակ կարևորեց ՀՀ դերը «Հյուսիս-հարավ» նախագծում: Հաշվի առնելով այն փաստը, որ Պակիստանը չի ձանաչել ՀՀ անկախությունը և ռազմական աջակցություն է ցուցաբերում Ադրբեջանին, Հայաստանը խորացնում է իր գործընկերությունը Հնդկաստանի հետ նաև ռազմական ոլորտում: Այսպիսով` Պակիստանի ակտիվ մասնակցությունը 44-օրյա պատերազմին աննկատ չմնաց Հնդկաստանի համար և պատերազմից անմիջապես հետո հանգեցրեց հայ-հնդկական ավանդական բարեկամության փոխակերպմանը մեծ հեռանկարներ ունեցող քաղաքական, տնտեսական ու ռազմատեխնիկական համագործակցության:

### Եզրակացություններ

Աշխարհաքաղաքական նոր իրավիճակում Հայաստանը կանգնել է նոր մարտահրավերների առաջ, բայց միևնույն ժամանակ ստացել է նոր հնարավորություններ: Եթե Արցախյան երկրորդ պատերազմից հետո Հայաստանը հայտնվել էր ռուս-թուրքական թակարդում, և նրան ուժով պարտադրվում էին լուծումներ, բայց ԱՄՆ-ում նախագահի փոփոխությամբ, Ուկրաինայում ռուս-ամերիկյան հակամարտության սրմամբ մեր երկիրը մանևրելու հնարավորություն է ստացել: Արդեն ակնհայտ է, որ ուկրաինական ձգնաժամը մեծ խաղի մաս է, որը սկսվել է Պուտինի հայտնի մյուսխենյան ելույթով, և որի նպատակը ուժային կենտրոնների փոփոխությունն է: Արցախյան երկրորդ պատերազմը և սիրիական թատերաբեմում զարգացումները նույնպես պետք է դիտարկել այդ համատեքստում. ցանկացած փոփոխություն ուկրաինական ճակատում իր արձագանքն է

գտնում Արցախում և Սիրիայում: 2022 թ. օգոստոսի 5-ին Սոչիում Էրդողան-Պուտին հանդիպումից հետո ադրբեջանական ուժերը մտան Լաչին, իսկ Սիրիայում սպասվում է թուրքական հերթական օպերացիան: Ակնհայտ է, որ գործ ունենք ռուս-թուրքական հերթական գործարքի հետ, երբ ՌԴ-ն, մնալով միայնակ միջազգային ասպարեզում և «դաշնակից» ունենալով Թուրքիային, գնում է զիջումների՝ ինչպես միշտ գոհաբերելով Հայաստանի շահերը: Ակնհայտ է նաև, որ ԱՄՆ նոր վարչակարգը ոչ միայն չի պատրաստվում զիջելու իր դիրքերը, այլև փորձում է վերացնել ռուսական ազդեցության ավանդական գոտիները: Այդ համատեքստում պետք է դիտարկել նաև Վաշինգտոնի ակտիվությունը ոչ միայն հայ-ադրբեջանական, այլև հայ-թուրքական հարաբերություններում:

Այսօր ՀՀ գլխավոր անելիքը արտաքին քաղաքականության ոլորտի դիվերսիֆիկացումն ու նոր հուսալի դաշնակիցների փնտրտուքն է: Հայաստանը անկախացումից հետո չի ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ ուղղված արտաքին ճակատում իր շահերի սպասարկմանը, ինչի հետևանքը պատերազմի ժամանակ միայնակ և առանց դաշնակցի մնալն էր: Այսօր Էրդողանի պանթուրքական քաղաքականությունը ՀՀ-ի համար բնական դաշնակիցներ է ստեղծում արաբական երկրներում, Եվրոպայում, ինչպես նաև ԱՄՆ-ում: Անհրաժեշտ է խորացնել հարաբերությունները Եգիպտոսի, Սաուդյան Արաբիայի և Պարսից ծոցի երկրների հետ, որոնք տարածաշրջանում հակակշիռ են հանդիսանում թուրքական նկրտումներին: Եվրոպայում ՀՀ բնական դաշնակիցներն են Ֆրանսիան, միջերկրածովյան երկրները, մասնավորապես՝ Հունաստանն ու Կիպրոսը, որոնք բացահայտ հակամարտության մեջ են Թուրքիայի հետ կիպրական հարցի, ինչպես նաև ծովային տարածքների պատկանելության շուրջ: Անչափ կարևոր է Իրանի գործոնը, որն այսօր ընդդիմանում է ՀՀ-ի հետ իր սահմանը փոխելու ռուս-թուրքական պլաններին՝ հասկանալով իրեն շրջափակելու Թուրքիայի, ինչպես նաև Իսրայելի նպատակը և ունենալով նաև թրքախոսների խնդիր, որոնց Բաքուն փորձում է օգտագործել Իրանում իրավիճակն ապակայունացնելու համար:

Առաջնային է նաև բանակի արդիականացման խնդիրը: Այստեղ կարևոր է Հնդկաստանի դերը, որի պաշտպանության նախա-

րարն իր՝ Երևան այցի ժամանակ հայտարարեց ՀՀ-ին ռազմական ոլորտում աջակցելու մտադրության մասին, ինչին հետևեց նաև ՀՀ արտաքին գերատեսչության ղեկավարի այցը Դելի: Ադրբեջանը Դելիի թշնամի Պակիստանի դաշնակիցն է, որը նույնիսկ չի ճանաչել ՀՀ անկախությունը: Հնդկաստանը նաև ԱՄՆ ռազմավարական դաշնակիցն է ընդդեմ Չինաստանի և ռազմական ոլորտում տիրապետում է նոր տեխնոլոգիաների: Ուշադրության են արժանի նաև Ֆրանսիայի և ԱՄՆ հայտարարությունները, որ չնայած ՀԱՊԿ անդամակցությունը թույլ չի տալիս ՀՀ-ին գենք տրամադրել, սակայն իրենք պարաստ են աջակցելու նրան բանակի արդիականացման և նոր տեխնոլոգիաների զարգացման հարցում: Կարևոր է նաև Կանադայի՝ Հարավային Կովկասում առաջինը Երևանում դեսպանատուն բացելու հանգամանքը՝ հաշվի առնելով պատերազմի ժամանակ բայրաքթարների արտադրության համար անհրաժեշտ մասերի վաճառքի արգելքի նախադեպը և այն փաստը, որ Կանադան առաջատար դիրքեր է զբաղեցնում ռազմական նորարարական տեխնոլոգիաների ոլորտում:

Մրցունակ տնտեսություն կառուցելու և տարածաշրջանում կարևոր ճանապարհային միջանցք դառնալու համար առաջնային է «Հյուսիս-հարավ» նախագծին ՀՀ մասնակցությունը, քանզի դա կապահովի մեր տնտեսական անկախությունը և ռազմավարական անվտանգությունը:

Ինչ վերաբերում է ՀՀ ռազմավարական դաշնակցին, ապա կասկած չկա, որ ՌԴ ներկայիս իշխանությունները որդեգրել են ակնհայտ թուրքամետ քաղաքականություն և գործում են ՀՀ շահերի դեմ: Չնայած ՀՀ բանակի զինման վերաբերյալ ՀՀ իշխանությունների հայտարարություններին՝ այսօր Ռուսաստանը չի ուզում և չի էլ կարող կատարել իր դաշնակցային պարտավորությունները: Մոսկվան ինքն է զբաղված զենքի փնտրտուքով Իրանում և Հյուսիսային Կորեայում, ինչպես նաև բայրաքթարներ է խնդրում Թուրքիայից: Սակայն վտանգավոր են նաև կտրուկ հակառուսական դիրքորոշման որդեգրումը, ՀԱՊԿ-ից դուրս գալը կամ Արցախում ռուս խաղաղապահներին այս պահին փոխարինելու հարցը բարձրաձայնելը: Միայն ուկրաինական ձակատում Ռուսաստանի հետագա թուլացումը հնարավորություն կտա Հայաստանին սպասարկելու իր ռազմա-



վարական շահերը: Երևանն այսուհետ ամեն կերպ պետք է չեղարկի նոյեմբերի 9-ի անօրինական փաստաթղթի գործադրումը՝ ունենալով այնպիսի հզոր փաստարկներ, ինչպիսիք են Ադրբեջանի կողմից իր պարտավորությունների չկատարումը, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի հայտարարությունները, որ Արցախի խնդիրը պետք է լուծվի Մինսկի խմբի շրջանակներում՝ հայտնի սկզբունքների կիրառմամբ: Հայաստանը պետք է օգտվի միջազգային ասպարեզում ՌԴ դիրքերի թուլացումից և Հարավային Կովկասի հանդեպ ԱՄՆ աճող հետաքրքրությունից: ԱՄՆ դիրքորոշումը, որ Ադրբեջանն ու Հայաստանը պետք է երկկողմ ձևաչափով լուծեն խնդիրները, կարող է սահմանափակել ռազմավարական դաշնակցի ձեռքով մեզ լուծումներ պարտադրելու Ադրբեջանի ու Թուրքիայի փորձերը:

Այսօր ՀՀ-ն կատարում է որոշ զգուշավոր քայլեր իրավիճակը շտկելու ուղղությամբ: Սակայն անհրաժեշտ է ձեռնարկել առավել գործուն քայլեր՝ համաշխարհային ու տարածաշրջանային տարբեր դերակատարներից, մասնավորապես՝ ԱՄՆ-ից ու Հնդկաստանից աջակցություն և անվտանգության երաշխիքներ ստանալու համար, ինչն անխուսափելի է ՌԴ ազդեցության գոտիները վերացնելու վերաբերյալ Արևմուտքի դիրքորոշման պայմաններում: Անհրաժեշտ է նաև համախմբել Սփյուռքի ներուժը և Իսրայելի օրինակով մշակել լոբբիստական կազմակերպությունների գործունեության հստակ դոկտրին, այլ ոչ թե օգտագործել Սփյուռքը որպես դրամի հավաքագրման միջոց: Պատահական չէ, որ, գիտակցելով հայկական սփյուռքի ներուժը, Թուրքիան փորձում է սեպ խրել ՀՀ-ի և Սփյուռքի միջև ու տարանջատել վերջինիս, ինչն այսօր, ցավոք, նրան հաջողվում է:

**Այս փուլում գնալ սահմանազատման, այն էլ՝ ԽՍՀՄ անօրինական քարտեզներով՝ չբարձրացնելով 1921 թ. Մոսկվայի պայմանագրի անօրինական լինելու հարցը, և կամ չդիմել ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարան՝ սահմանների ճշգրտման նպատակով, կնշանակի անտեսել Հայաստանի կենսական շահերը:** Շատերը կարծիք են հայտնում, որ այս պահանջների բարձրացումն անիրատեսական է, սակայն Հայաստանի նման փոքր պետությունները նվազագույնը պետք է փորձեն օգտվել միջազգային իրավունքի գործիքակազմից: ՄԱԿ-ի դատարանում պետք է բարձրացվի նաև Արցախի՝ Կովկասյան բյուրոյի անօրինա-

կան որոշմամբ Ադրբեջանին բռնակցման և նրա ժողովրդի ինքնորոշման իրավունքի օրինական իրացման հարցը:

Այսօր Ադրբեջանը ներկայացնում է կեղծ պատմական փաստեր, թե իբր Արցախը միշտ եղել է Ադրբեջանի կազմում, ՀՀ-ի և Ադրբեջանի միջև սահմանը պետք է գծվի ԽՍՀՄ քարտեզներով, միաժամանակ հրաժարվում է ԽՍՀՄ ժառանգությունից և իրեն համարում Ադրբեջանի առաջին հանրապետության իրավահաջորդ: Այդ պայմաններում Հայաստանը նույնպես պետք է իրեն հռչակի Հայաստանի առաջին հանրապետության իրավահաջորդ, որից հետո մեխանիկորեն առաջ կգա Ազգերի լիգայի՝ 1920 թ. փետրվարի 24-ի Հայաստան-Ադրբեջան սահմանի վճռահատման առաջարկը հիմք ընդունելու հարցը: Բացի այդ, եթե Հայաստանը պետք է ճանաչի Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, ապա այդ տարածքի սահմանները պետք է որոշի ՄԱԿ-ի դատարանը՝ միջազգային օրենքներին համապատասխան: Ինչ վերաբերում է Թուրքիային, պարզ է, որ մոտակա տարիներին անհնար է Անկարային տարածքային պահանջների ներկայացումը: Սակայն հասնելով 1921 թ. Մոսկվայի պայմանագրի անօրինականության ճանաչմանը՝ Հայաստանը գոնե կկարողանա չեզոքացնել Թուրքիայի ակտիվ դերը հայ-ադրբեջանական հակամարտությունում՝ հետագա սերունդներին չզրկելով իրենց օրինական իրավունքներից:

Արցախյան երկրորդ պատերազմը ցույց տվեց, որ 30 տարվա ընթացքում Հայաստանը չի հաջողել ո՛չ ներքին, ո՛չ արտաքին քաղաքականության ոլորտում, մնացել է միայնակ միջազգային ասպարեզում: Այսօր, առավել քան երբևէ, եկել է մեր երկրի համար կարևոր որոշումների կայացման և մտածելակերպի փոփոխության ժամանակը, իսկ հապաղելը կարող է հանգեցնել անդամնալի հետևանքների և կործանարար լինել հայոց պետականության համար:

**Լիլիթ Վ. Դալլաքյան** – գիտական հետաքրքրությունների շրջանակում են միջազգային հարաբերություններում էթնիկ հակամարտությունների դերակատարությանը, գերտերությունների քաղաքականության վրա դրանց ազդեցությանը, ինչպես նաև էթնիկ հակամարտությունների գոտիներում միջազգային խոշոր դերակատարների մրցակցությանն առնչվող հիմնահարցերը:

Էլ. հասցե՝ dallakyanlilit90@gmail.com

## Summary

### **THE SECOND ARTSAKH WAR AND ITS CONSEQUENCES**

A Comparative Analysis of the Positions of the Global and Regional Actors  
towards the Second Artsakh War

Lilit V. Dallakyan

**Key words** - Second Artsakh war, the USA, Russia, France, Turkey, Iran, India, China, Minsk Group, UN International Court of Justice, Treaty of Moscow, Genocide.

The article attempts to identify the causes of the Second Artsakh war, the framework of the potential winners, as well as the obvious losers. Attention is particularly paid to the consequences of the war, the new challenges Armenia is facing, as well as the potential opportunities that have opened up for Armenia. New strategic directions of development are presented; the urgent questions requiring making decisions in external and integral policy, goals and direction of possible diversification in foreign policy are being discussed.

In the new geopolitical situation Armenia is facing new challenges and at the same time is getting new opportunities. If after the Second Artsakh war Armenia found itself squeezed between Russian-Turkish power and decisions were imposed on Yerevan, including over the Zangezur corridor, then with the change of the president in the United States and the escalation of the Russian-American conflict in Ukraine, Armenia had a chance to maneuver. It is already clear that the Ukrainian crisis is part of a large game that began with Putin's famous Munich speech and the goal of which was to change the centers of power in the geopolitical scene. At the same time, it is obvious that the US has begun to show interest in traditionally Russian spheres of influence. Today, the West, in particular the United States and France, are active not only in Armenian-Azerbaijani, but also in Armenian-Turkish relations, and activated their efforts within the framework of the Minsk Group.

The second Artsakh war showed that for 30 years Armenia did not succeed in either domestic or foreign policy, has no allies in the international arena, did not use the potential of the army without transforming and modernizing it. It is vital for the RA to modernize the army, create a competitive economy, deepen relations with the Diaspora and use its financial, intellectual and lobbying potential, including concerning Armenian question and legitimize the demands of Armenia.

Today, more than ever, the time has come for making important decisions for the country and for changes in strategic thinking, and delay in making these decisions can lead to irreversible consequences and be destructive for the Armenian statehood.

Резюме

## **ВТОРАЯ АРЦАХСКАЯ ВОЙНА И ЕЕ ПОСЛЕДСТВИЯ**

Позиции мировых и региональных акторов: сравнительный анализ

Лилит В. Даллакян

**Ключевые слова** - Вторая Арцахская война, США, Россия, Франция, Турция, Иран, Индия, Китай, Минская группа, Международный суд ООН, Московский договор, геноцид.

В статье предпринята попытка выявить причины Второй Арцахской войны, рамки и круг потенциальных бенефициаров, а также проанализировать причины поражения. Особое внимание уделено последствиям войны, новым вызовам, стоящим перед Арменией, а также потенциальным возможностям, открывшимся перед Арменией. Представлены новые стратегические направления внешней политики Армении, безотлагательные вопросы, требующие срочного принятия решений, цели и направления возможных диверсификаций во внешнеполитическом направлении.

В новой геополитической ситуации Армения столкнулась с новыми вызовами и в то же время получила новые возможности. Если

после Второй Арцахской войны Армения оказалась зажатой в результате российского попустительства турецко-азербайджанской агрессии и ей навязывались решения, в том числе по т.н. «Зангезурскому коридору», то со сменой президента в США и эскалацией российско-американского конфликта на Украине, у Армении появился шанс для маневра. Уже сейчас очевидно, что украинский кризис – это часть большой игры, которая началась со знаменитой мюнхенской речи Путина и цель которой - перераспределение сфер влияния в мире. Со своей стороны, Запад, в частности США и Франция, проявляют активность не только в армяно-азербайджанских, но и в армяно-турецких отношениях, а также активизируют свои усилия в рамках Минской группы ОБСЕ.

Вторая Арцахская война показала, что за 30 лет Армения не преуспела ни во внутренней, ни во внешней политике, осталась без союзников на международной арене, растратила потенциал армии, не преобразовав и не модернизировав ее. Для РА жизненно важно модернизировать армию, создать конкурентоспособную экономику, углубить отношения с Диаспорой и использовать ее финансовый, интеллектуальный и лоббистский потенциал, в том числе касательно Армянского вопроса.

Сегодня, как никогда, настало время для принятия важных для страны решений и изменений в стратегическом мышлении, и промедление принятия этих шагов может привести к необратимым последствиям и быть разрушительным для армянской государственности.

## REFERENCE

1. **Demojan G.**, Turcija I Karabaxskij konflikt v konce XX – nachale XXI vekov. Istoriko-sravnitel'nyj analiz, Jer., 2006 (**In Russian**).